ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Լեզուների ամբիոնի» ընթացակարգ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

Լեզուների ամբիոնի 2018թ. ընթացակարգ

Ուսումնական տարվա սկզբից ամսի կանոնակարգվում են ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի բոլոր աշխատանքները, այդ թվում ամբիոնների: Լեզուների ամբիոնում ընդգրկված են «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Անգլերեն», «Ռուսերեն» առարկաները:

Աշխատանքնային պլանի կազմում, որում պետք է ընդգրկեմ հետևյալ աշխատանքները.

1. Կազմել, ճշտել, հաստատել և ներկայացնել օրացուցային թեմատիկ պլանները, ուսումնական ծրագրերը, առարկայական կաբինետների պլանները, տնօրինության կողմից հանձնարարված ստուգողական աշխատանքների բնագրերը:

Ամբիոնի անդամներին տեղեկացնում են տնօրինության կողմից տրված հանձնարարականներին:

2. Նոր մեթոդական գրականության քննարկում, պաշտոնական ձեռնարկների ձեռքբերում:

3. Տեսական և գործնական մակարդակի ապահովման նպատակով լ մեթոդական, գիտական զեկույցների, գործնական խորհրդատվությունների կազմակերպում նոր մեթոդների կիրառման նպատակով:

4. Փոխադարձ դասալսումների միջոցով ընդհանրացնել լավագույն և փորձառու դասախոսների փորձը և տարածել:

5. Փորձի փոխանակման նպատակով նաև բաց դասերի, դասալսումների, բանավեճերի կազմակերպում:

6. Առաջավոր փորձի ուսումնասիրման նպատակով դասավանդողների գործունեության բոլոր ոլորտների, դիտարկում, նորի արժեքավորում և իմաստավորում:

7. Մեթոդական անկյունի առկայություն առարկայական կաբինետներում, որտեղ անհրաժեշտ է ունենալ մեթոդական գրականություն, տեսանյութեր, ձայնագրություններ:

8. Ամբիոնում հաճախակի վերահսկողության անցկացում:

9. Նիստի անցկացում և արձանագրում:

10. Կաբինետների վարիչների կողմից հաշվետվությունների ներկայացում:

11. Ուս. տարվա վերջում ամբիոնի վարիչի կողմից տարեկան հաշվետվության ներկայացում:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա. Ե. ՄԿՐՏՉՅԱՆ